ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

03-ը հոկտեմբերի 2025թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Աբովյան համայնքի սիրելի՛ բնակիչներ.
Այսօր տոնում ենք մեր հարազատ քաղաքի հիմնադրման 62-րդ տարեդարձը, որի կապակցությամբ ի սրտե շնորհավորում եմ բոլորիս:
Հետհայացք նետելով անցած վերջին տասնամյակներին՝ ուրախությամբ պիտի փաստենք, որ Աբովյանն այսօր զգալիորեն բարեփոխվել է: Մենք շարունակում ենք հաստատուն քայլերով առաջ շարժվել և գրանցել նկատելի առաջընթաց ամենատարբեր ոլորտներում: Քաղաքում այսօր իրականացվում են ճանապարհաշինարարական, ենթակառուցվածքների հիմնանորոգման, հանրային և բակային տարածքների բարեկարգման ծավալուն աշխատանքներ, որոնք ուղղված են աբովյանցիների կյանքի որակի բարելավմանը: Շարունակում ենք մեր ուշադրության կենտրոնում պահել կրթության, մշակույթի, սպորտի բնագավառները՝ ստեղծելով լավագույն պայմանները մեր երեխաների ու երիտասարդների համար:
Սիրելի՛ աբովյանցիներ.
Մեծապես գնահատում եմ յուրաքանչյուրիդ սրտացավ վերաբերմունքը մեր քաղաքի բարեկարգման, մաքրության ու գեղեցիկ տեսքի պահպանման հարցում, կարևորում եմ բոլորիդ ակտիվ ներգրավվածությունը համայնքային աշխատանքներում: Ձեր ձայնը միշտ լսելի է և բազում համայնքային հիմնախնդիրներ լուծվում են հենց բնակիչների հետ ակտիվ համագործակցության արդյունքում:
Աբովյանը օր օրի գրավիչ է դառնում իր տաղանդավոր, նպատակասլաց ու աշխատասեր բնակիչների շնորհիվ. հպարտությամբ եմ ընդունում ամենատարբեր բնագավառներում հաղթանակներ գրանցող երիտասարդներին ու գործունյա բնակիչներին, որոնց շնորհիվ մեր քաղաքը դառնում է ճանաչելի և մրցունակ:
Միասին շարունակելու ենք շենացնել մեր հարազատ Աբովյանը, նվիրումով գործելու ենք առավել մաքուր, խնամված ու բարեկեցիկ քաղաք ունենալու համար:
Տարեդարձդ շնորհավոր Աբովյան:
Տոնդ շնորհավոր աբովյանցի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**